ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

№ Հ-21/14

«15» հունվարի 2014թ.

Ձեր _____ № _____

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շահգալդյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30 - րդ հոդվածի 8 - րդ կետի համաձայն ուղարկվում է Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 14 - ի նիստի որոշումների լուսապատճենները և հավելվածները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2014 թվականի № 01 – Ա

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14 – Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12–րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 14 - ի նիստի օրակարգը .

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին
2. Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 179 – Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դետեմբերի 19-ի N 181 - Ա, 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N 190 – Ա և N 191 – Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին
4. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գներ հաստատելու մասին

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ _____

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ _____

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2014 թվականի № 02 – Ա

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ **ավագանին որոշում է.**

Ի գիտություն ընդունել Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին տեղեկատվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ _____

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ _____

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2014 թվականի № 03 – Ն

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 – Ի N 179 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ավագանին որոշում է.

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 179-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի՝

1) եկամուտների գծով ՝ 170252.4 հազար դրամ
2) ծախսերի գծով 182045.0 հազար դրամ
3) դեֆիցիտը / պակասուրդը / 11792.6 հազար դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1,
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման ՝ հատված 2 ,
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման ՝ հատված 3 ,
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը հատված 4
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները, հատված 5,
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման ՝ հատված 6:
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

1) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____
ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ _____
ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ _____
ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____
ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____
ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2014 թվականի № 04 – Ա

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 181 - Ա , ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 190 – Ա, N 191 – Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետը և համայնքի ղեկավարի օգնական Հայկ Վարդանյանի զեկուցագիրը՝ ավագանին որոշում է.

1. Անվավեր ճանաչել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու

1) 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Զորավար Անդրանիկի փողոցի 32/92/1 հասցեի հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 181 – Ա որոշումը

2) 2013 թվականի դեկտեմբերի 23-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Սարալանջ 2 թաղամասի 4-րդ փողոցի թիվ 22 հասցեի հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 190 – Ա որոշումը

3) 2013 թվականի դեկտեմբերի 23-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Վազգեն Սարգսյանի փողոց 15/34/1 հասցեի հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 191 – Ա որոշումը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ _____

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ _____

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2014 թվականի № 05 – Ն

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ՝ Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյանի փողոց թիվ 15/34/1 (վկայական N20122012-07-0065 տրված 2013 թվականի դեկտեմբերի 20-ին, ծածկագիր՝ 07-003-0037-0145, մակերեսը 0.001754հեկտար) հասցեի և Բյուրեղավան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 32/92/1 (վկայական N16122013-07-0055 տրված 2013 թվականի դեկտեմբերի 16-ին, ծածկագիր՝ 07-003-0020-1080, մակերեսը 0.0032հեկտար) հասցեի հասարակական կառուցապատման հողամասերն ու Բյուրեղավան քաղաքի Սարալանջ 2 թաղամաս 4-րդ փողոց թիվ 22/1 (վկայական N19122013 -07-0047 տրված 2013 թվականի դեկտեմբերի 19-ին, ծածկագիր՝ 07-003-0016-1011, մակերեսը 0.03555հեկտար) հասցեի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և մեկնարկային գներ հաստատելու մասին Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ _____

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ _____

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

Հավելված
2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 179-Ն որոշման
փոփ. 2014թվականի հունվարի 14-ի N 03-Ն որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2014 Թ-Վ ԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Բյուրեղավանի քաղաքային համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 179-Ն
2014թվականի հունվարի 14-ի N 03-Ն որոշմամբ
(շարադրված նոր խմբագրությամբ)

Աբովյանի տեղական գանձապետական բաժանմունք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ